

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/4

19 մայիսի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լիանա Թութունջյանի 02.05.2015 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 30.04.2015 թ-ի թիվ 5101369 ակտի դեմ:

Ա/Ձ Լիանա Թութունջյանի գանգատում բերված փաստարկները.

09.04.2015 թ-ի թիվ 5101369 հանձնարարագրով Խորենացի 31 հասցեում գտնվող Տաշիր առևտրի կենտրոնում թիվ 479 տաղավարում իրականացվել է հսկիչ գնում: Մասնավորապես, 15.04.2015 թ-ին կատարվել է գնում, որի համար տրամադրվել է կտրոն: Այնուհետև 22.04.2015 թ-ին, ոմն մի աղջիկ, որի տվյալները հայտնի չեն, վերցրել է մեկ հատ շապիկ և հաշվի առնելով հանգամանքը, որ այն պետք է ցույց տրվեր դերձակին՝ թերությունները շտկելու նպատակով, խնդրել է գնում չձևակերպել: Նրա դուրս գալուց հետո ներս է մտել տեսուչ Է.Ջանոյանը և արձանագրել է խախտում, այն է՝ ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստ, որն իրականությանը չի համապատասխանում:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Լիանա Թութունջյանը խնդրում է հարցին տալ արդարացի լուծում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 09.04.2015 թ-ի թիվ 5101369 հանձնարարագրի Ա/Ձ Լիանա Թութունջյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 30.04.2015 թ-ի թիվ 5101369 ակտը (այսուհետ նաև Ակտ), որում մասնավորապես նշվել է.

Գլխավոր հարկային տեսուչ Կարապետ Գրիգորյանի կողմից 22.04.2015 թ-ին, ժամը 13:20-ին ք.Երևան, Խորենացու 33 479 հասցեում գտնվող առևտրի կետից կատարվել է գնում 10.000 դրամի չափով՝ 1 հատ կանացի զգեստ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Լիանա Թութունջյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 13:24-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 0 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել:

Չմուտքագրված գումարը՝ 10.000 դրամը, ժամը 13:26-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել ՀԴՄ կտրոն, որից հետո կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ գումարով 10.000 դրամ:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման Հավելված 2-ով հաստատված ՀԴՄ կիրառման կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որը նույն կարգի 40-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերի համաձայն հանդիսանում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում: Արդյունքում, կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 300.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են գնված ապրանքի դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, կատարված գնումից հետո ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը:

Ավելին, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից վերոգրյալ գնումը կատարելու օրը՝ 22.04.2015 թ-ին, կազմվել է թիվ 1 արձանագրությունը, որում նշվել է ստուգման ընթացքում գնված կանացի զգեստի դիմաց՝ գումարով 10.000 դրամ, Ա/Ձ Լիանա Թութունջյանի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու վերաբերյալ: 22.04.2015 թ-ի թիվ 1 արձանագրությունը ստորագրված է թե ստուգող անձանց, թե Ա/Ձ Լիանա Թութունջյանի կողմից: Ընդ որում, վերջինիս կողմից չի կատարվել որևէ գրառում՝ արձանագրությունում նշված փաստերի հետ համաձայն չլինելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են Ա/Ձ Լիանա Թութունջյանի կողմից ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված կանոնների պահանջները խախտած լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 30.04.2015 թ-ի թիվ 5101369 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


 Վ.ՄԻՔԻՄՅԱՆ